Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2019 թվականի մայիսի 8-ին ստորագրված Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև «Ավելի մրցունակ և զանազանեցված մասնավոր հատվածի շուրջ» օժանդակության համաձայնագրի թիվ 12 փոփոխության՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող բնօրինակի նույնական պատճենն է:

Հայաստանի Հանրապետության
Արտաքին գործերի նախարարության
Միջազգային պայմանագրերի և
իրավունքի վարչության պետի պ/կ՝

Տիգրան Գալստյան

Գործադիր օրինակ

# ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 12

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ

# ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

# ՄԻՋԵՎ

# ԱՎԵԼԻ ՄՐՑՈՒՆԱԿ ԵՎ ԶԱՆԱԶԱՆԵՑՎԱԾ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ՇՈՒՐՋ

# ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ

**8-ը մայիսի, 2019թ.**

**ԱՄՆ ՄԶԳ Օժանդակության համաձայնագիր հմ. AAG-111-G-10-001**

Հայաստանի Հանրապետության Կառավարության՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության (այսուհետև՝ Դրամաշնորհի ստացող) և Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարության՝ ի դեմս Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ), միջև 2010 թվականի օգոստոսի 6-ով թվագրված՝ Ավելի մրցունակ և զանազանեցված մասնավոր հատվածի շուրջ Օժանդակության համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 12:

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ 2010 թվականի օգոստոսի 6-ին Դրամաշնորհի ստացողը և ԱՄՆ ՄԶԳ-ն Օժանդակության համաձայնագիր են կնքել՝ խթանելու համար ավելի մրցունակ և զանազանեցված մասնավոր հատվածի կայացումը, ինչպես նկարագրված է նշված Համաձայնագրի 1-ին Հավելվածում (Մանրամասն նկարագրություն), և

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ Դրամաշնորհի ստացողը և ԱՄՆ ՄԶԳ-ն ցանկանում են փոփոխություն կատարել Համաձայնագրում՝

1) ավելացնելու համար ԱՄՆ ՄԶԳ կողմից ընդհանուր հատկացվելիք գումարը 73,255,406.36 $-ից մինչև 80,704,406.36 $՝ այսպիսով տրամադրելով 7,449,000 $-ի լրացուցիչ ֆինանսավորում՝ Համաձայնագրի ներքո գործողությունների հետագա իրականացումը շարունակելու նպատակով;

2) ավելացնելու համար ԱՄՆ ՄԶԳ ընդհանուր նախատեսվող ներդրումը 73,255,406.36 $-ից մինչև 80,704,406.36 $;

3) ավելացնելու համար Դրամաշնորհ ստացողի ներդրումը մինչև 26,901,469 $; և

4) երկարացնելու Համաձայնագրի իրականացման ժամկետը 2020 թվականի սեպտեմբերի 30-ից մինչև 2023 թ. սեպտեմբերի 30-ը:

ԱՅՍՊԻՍՈՎ՝ Կողմերը սույնով համաձայնում են, որ Համաձայնագրում կատարվեն հետևյալ փոփոխությունները.

1. Համաձայնագրի 3.1.ա) բաժինը՝ «Դրամաշնորհ» վերնագրով, ամբողջությամբ հանվում է և փոխարինվում հետևյալով.

   «ա) Դրամաշնորհ: Սույն Համաձայնագրում սահմանված Նպատակի իրականացմանն աջակցելու նպատակով ԱՄՆ ՄԶԳ-ն, համաձայն 1961 թվականի Օտարերկրյա օժանդակության որոշման՝ համապատասխան փոփոխություններով, սույնով Դրամաշնորհ ստացողին է տրամադրում ութսուն միլիոն յոթ հարյուր չորս հազար չորս հարյուր վեց Միացյալ Նահանգների (ԱՄՆ) դոլար երեսունվեց ցենտը (80,704,406.36 $) չգերազանցող գումար (այսուհետ՝ Դրամաշնորհ):»

2. Համաձայնագրի 3.1 բ) բաժինը՝ « ԱՄՆ ՄԶԳ ընդհանուր նախատեսվող ներդրումը » վերնագրով, ամբողջությամբ հանվում է և փոխարինվում հետևյալով.

   « բ) ԱՄՆ ՄԶԳ ընդհանուր նախատեսվող ներդրումը: Նպատակի իրականացման համար ԱՄՆ ՄԶԳ ընդհանուր նախատեսվող ներդրումը կկազմի ութսուն միլիոն յոթ հարյուր չորս հազար չորս հարյուր վեց Միացյալ Նահանգների (ԱՄՆ) դոլար երեսունվեց ցենտ (80,704,406.36 $), որը կտրամադրվի աճող մասնաբաժիններով: Հաջորդող աճող մասնաբաժինները պայմանավորված կլինեն այդ նպատակի համար ԱՄՆ ՄԶԳ միջոցների առկայությամբ և ԱՄՆ ՄԶԳ կողմից կարող են տրամադրվել՝ Դրամաշնորհ ստացողին գրավոր ծանուցմամբ: Կողմերը համաձայնում են, որ յուրաքանչյուր այդպիսի աճող ներդրում, եթե այդպիսին կա, կուտակային եղանակով կավելացնի 3.1 բաժնում սահմանված Դրամաշնորհի ընդհանուր գումարը և, հետևաբար, կարող է ավելացնել 3.2-րդ բաժնի ներքո Դրամաշնորհ ստացողի ներդրումը: Դրամաշնորհ ստացողը նաև համաձայնում է

ԱՄՆ ՄԶԳ-ին տրվող գրավոր ծանուցմամբ հաստատել յուրաքանչյուր այդպիսի աճող ներդրման ստացումը, եթե այդպիսին կա:»

3. Համաձայնագրի 3.2.բ) բաժինը ամբողջությամբ հանվում է և փոխարինվում հետևյալով.

« բ) Հիմք ընդունելով 3.1.ա) բաժնում սահմանված ԱՄՆ ՄԶԳ ներդրումը՝ Դրամաշնորհի ստացողի ներդրումը չի կարող պակաս լինել քսանվեց միլիոն ինը հարյուր մեկ հազար չորս հարյուր վաթսունինը (26,901,469 $) Միացյալ Նահանգների դոլարի համարժեքից՝ բաղկացած ընթացիկ բյուջեի միջոցներից տրամադրվող բնաիրային ներդրումներից: Եթե ԱՄՆ ՄԶԳ-ն աճման կարգով ավելացնում է 3.1.ա) բաժնում սահմանված Դրամաշնորհի գումարը, ինչպես սահմանված է սույն փաստաթղթում, ապա Դրամաշնորհի ստացողի ներդրումը յուրաքանչյուր աճող մասնաբաժնին զուգընթաց համապատասխանաբար կավելանա այնպես, որ Դրամաշնորհի ստացողի ներդրումը պակաս չլինի Դրամաշնորհի այն մասի մեկ երրորդից, որն օգտագործվում է՝ օժանդակելու համար այնպիսի գործունեությաններ, որոնք ուղղակիորեն զգալի օգուտ են բերում Հայաստանի Կառավարությանը կամ ենթադրում է Հայաստանի Կառավարության ուղղակի կամ էական ներգրավվածությունը այդ աջակցության իրականացման, վերահսկման կամ կառավարման հարցում: Դրամաշնորհի ստացողի ներդրման ճշգրիտ գումարը կնշվի յուրաքանչյուր աճող ներդրման վերաբերյալ ԱՄՆ ՄԶԳ գրավոր ծանուցման մեջ: Նպատակի իրականացման համար Դրամաշնորհի ստացողի կողմից ընդհանուր նախատեսվող ներդրումը պայմանավորված կլինի այդ նպատակի համար Դրամաշնորհի ստացողի բյուջետային միջոցների առկայությամբ և 3.1.բ) բաժնում նշված՝ ԱՄՆ ՄԶԳ կողմից ընդհանուր նախատեսվող գումարի տրամադրմամբ: Դրամաշնորհի ստացողն առնվազն տարեկան կտրվածքով հաշվետվություններ կներկայացնի իր դրամական և բնաիրային ներդրումների վերաբերյալ՝ ԱՄՆ ՄԶԳ հետ համաձայնեցված ձևաչափով:»

4. Մաս 4 (ա) –ն ամբողջությամբ հանվում է և փոխարինվում հետևյալով.

“ա) Համաձայնագրի իրականացման ժամկետը, որը 2023 թվականի սեպտեմբերի 30-ն է կամ Կողմերի միջև գրավոր համաձայնեցված ցանկացած այլ ամսաթիվ, այն ամսաթիվն է, երբ, ըստ Կողմերի գնահատման, նպատակի իրագործման համար անհրաժեշտ բոլոր աշխատանքները պետք է ավարտված լինեն:»

5. 1-ին Հավելվածի «Ֆինանսական պլան Առդիր 1 (Ա)»-ն, ամբողջությամբ հանվում է և փոխարինվում հետևյալով.

«Ֆինանսական պլան Առդիր 1 (Ա)

| Նպատակ | Ծրագրային ոլորտ | Նախորդ պարտավորություն | Սույն փոփոխություն | Ընդհանուր պարտավորություն |
|---|---|---|---|---|
| Տնտեսական աճ | Աճի մակրոտնտեսական հիմք | 2,905,000.36 | - | 2,905,000.36 |
| | Առևտուր և ներդրումներ | 4,132,922 | - | 4,132,922 |
| | Ֆինանսական հատված | 5,978,948 | - | 5,978,948 |
| | Մասնավոր հատվածի մրցունակություն | 43,913,519 | 5,249,000 | 49,162,519 |
| | Ենթակառուցվածքներ | 10,225,017 | 2,200,000 | 12,425,017 |
| | Շրջակա միջավայր | 1,000,000 | - | 1,000,000 |
| Բնակչությանն ուղղված ներդրումներ | Առողջապահություն | 4,300,000 | - | 4,300,000 |
| | Կրթություն | 500,000 | - | 500,000 |
| | Խոցելի բնակչության սոցիալական և տնտեսական ծառայություններ և պաշտպանություն | 300,000 | - | 300,000 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | **73,255,406.36** | **7,449,000** | **80,704,406.36»** |

6. Բացառությամբ սույնով կատարված փոփոխությունների՝ Համաձայնագրի մյուս բոլոր դրույթներն ու պայմանները մնում են անփոփոխ, ուժի մեջ են և վավեր:

Ի ՎԿԱՅՈՒՄՆ ՈՐԻ՝ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարությունը, յուրաքանչյուրը գործելով պատշաճ կերպով լիազորված իր ներկայացուցչի միջոցով, ապահովել են իրենց անունից սույն թիվ 12 Փոփոխության ստորագրումը և հանձնումը վերն առաջինը նշված ամսաթվին և թվականին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Անուն՝ Տիգրան Խաչատրյան

Պաշտոն՝ Հայաստանի Հանրապետության Տնտեսական զարգացման և ներդրումների նախարար

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Անուն՝ Դեբորա Գրիզեր

Պաշտոն՝ ԱՄՆ ՄԶԳ/Հայաստանյան գրասենյակի տնօրեն

Անուն՝ Ալեքս Սոկոլովսկի

Պաշտոն՝ ԱՄՆ ՄԶԳ/ Եվրոպայի և Եվրասիայի հարցերով փոխտնօրենի տեղակալ

Փոփոխություն թիվ 12 Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարության միջև 2010 թվականի օգոստոսի 6-ով թվագրված՝ Ավելի մրցունակ և զանազանեցված մասնավոր հատվածի շուրջ Օժանդակության համաձայնագրի:

**AMENDMENT NUMBER TWELVE**

**TO**

**Assistance Agreement between the Government of the Republic of Armenia and Government of the United States of America for a More Competitive and Diversified Private Sector**

**May 8, 2019**

**USAID Assistance Agreement No. AAG-111-G-10-001**

AMENDMENT NUMBER TWELVE to the Assistance Agreement between the Government of the Republic of Armenia, acting through the Ministry of Economic Development and Investments of the Republic of Armenia (hereinafter referred to as the "Grantee"), and the Government of the United States of America, acting through the United States Agency for International Development ("USAID"), for a More Competitive and Diversified Private Sector, dated August 6, 2010, as amended (the "Agreement").

WHEREAS, on August 6, 2010, the Grantee and USAID entered into the Agreement to accelerate the emergence of a more competitive and diversified private sector as described in Annex 1 (the "Amplified Description") to said Agreement; and

WHEREAS, the Grantee and USAID desire to further amend the Agreement in order to:

1) increase the total amount obligated by USAID from $73,255,406.36 to $80,704,406.36, thus providing additional funding of $7,449,000 to further implementation of the activities under the Agreement;

2) increase the Total Estimated USAID Contribution from $73,255,406.36 to $80,704,406.36;

3) increase the Grantee's contribution to $26,901,469; and

4) extend the Completion Date from September 30, 2020 to September 30, 2023.

NOW, THEREFORE, the Parties hereby agree that the Agreement shall be amended as follows:

1. Section 3.1(a) of the Agreement entitled "The Grant." is deleted in its entirety and the following is substituted therefore:

   "(a) The Grant. To help achieve the Objective set forth in this Agreement, USAID, pursuant to the Foreign Assistance Act of 1961, as amended, hereby grants to the Grantee under the terms of the Agreement an amount not to exceed

eighty million, seven hundred four thousand, four hundred and six United States ("U.S.") Dollars and thirty-six cents ($80,704,406.36) (the "Grant")."

2. Section 3.1(b) of the Agreement entitled "Total Estimated USAID Contribution" is deleted in its entirety and replaced with the following:

   "(b) Total Estimated USAID Contribution. USAID's total estimated contribution to achievement of the Objective will be eighty million, seven hundred and four thousand, four hundred six U.S. Dollars and thirty-six cents ($80,704,406.36), which will be provided in increments. Subsequent increments will be subject to the availability of funds to USAID for this purpose and may be provided by USAID upon written notice to the Grantee. The Parties agree that each such incremental contribution provided, if any, shall cumulatively increase the total amount of the Grant set forth in Section 3.1 and consequently may increase the Grantee's contribution under Section 3.2. The Grantee further agrees to acknowledge by written notice to USAID each such incremental contribution, if any."

3. Section 3.2(b) of the Agreement is deleted in its entirety and the following is substituted therefore:

   "(b) The Grantee's contribution, based on USAID's contribution in Section 3.1(a), will not be less than the equivalent of twenty-six million, nine hundred one thousand, four hundred sixty-nine U.S. Dollars ($26,901,469), composed of in-kind contributions from current budgetary resources. If USAID increases the amount of the Grant in Section 3.1(a) incrementally, as contemplated herein, the Grantee's contribution shall increase with each increment accordingly, such that the Grantee's contribution will not be less than the equivalent of one-third of that portion of the Grant that is used to support activities that either directly provide substantial benefit to the Government of Armenia or involves the direct and substantial involvement of the Government of Armenia in the administration, control or management of such assistance. The precise amount of Grantee contribution shall be indicated in USAID's written notice of each incremental contribution. The Grantee's total estimated planned contribution to the Objective will be subject to availability of budgeted funds to the Grantee for this purpose and to USAID providing the total estimated amount in Section 3.1(b). The Grantee will report at least annually in a format to be agreed upon with USAID on its cash and in-kind contributions."

4. Article 4(a) of the Agreement is deleted in its entirety and the following is substituted therefore:

   "(a) The Completion Date, which is September 30, 2023, or such other date as the Parties may agree to in writing, is the date by which the Parties estimate that all the activities necessary to achieve the Objective will be completed."

5. Annex 1 "Financial Plan Annex 1 (A)" is deleted in its entirety and the following is substituted therefore:

**"Financial Plan Annex 1 (A)**

| Objective | Program Area | Previous Obligation | This Amendment | Total Obligation |
|---|---|---|---|---|
| Economic Growth | Macroeconomic Foundation for Growth | 2,905,000.36 | - | 2,905,000.36 |
| | Trade and Investment | 4,132,922 | - | 4,132,922 |
| | Financial Sector | 5,978,948 | - | 5,978,948 |
| | Private Sector Competitiveness | 43,913,519 | 5,249,000 | 49,162,519 |
| | Infrastructure | 10,225,017 | 2,200,000 | 12,425,017 |
| | Environment | 1,000,000 | - | 1,000,000 |
| Investing in People | Health | 4,300,000 | - | 4,300,000 |
| | Education | 500,000 | - | 500,000 |
| | Social and Economic Services and Protection for Vulnerable Populations | 300,000 | - | 300,000 |
| **TOTAL** | | **73,255,406.36** | **7,449,000** | **80,704,406.36"** |

6. Except as amended herein, all other terms and conditions of the Agreement remain unchanged and in full force and effect.

FUNDS AVAILABLE US AID
ARMENIA
Checked by RBoyajan
Authorized by

IN WITNESS HEREOF, the Government of the Republic of Armenia and the Government of the United States of America, each acting through its duly authorized representative, have caused this Amendment Number Twelve to be signed in their names and delivered as of the day, month and year written above:

| REPUBLIC OF ARMENIA | UNITED STATES OF AMERICA |
|---|---|
| By: ______________ | By: ______________ |
| Name: Tigran Khachatryan | Name: Deborah Grieser |
| Title: Minister of Economic Development and Investments of the Republic of Armenia | Title: USAID/Armenia Mission Director |

By: ______________

Name: Alex Sokolowski

Title: USAID/Europe and Eurasia
Deputy Assistant Administrator

**Amendment No. Twelve to the Assistance Agreement between the Government of the Republic of Armenia and the Government of the United States of America for a More Competitive and Diversified Private Sector, dated August 6, 2010**